րում մի լրագրի 40-ամեայ գոյութեան տօնումը ողջունել...

Հալաբարեան ակումբի աւագների և Ուսուցչական Միութեան վարչութեան վերոյիշեալ խնդրում վայելած դափնիները հանգիստ չեն տալիս ուրիշներին։ Դրանց հետևում են մեծ ոգևորութեամբ «Հօրիզոնի» ղեկավարները, Երևանի Թեմական դպրոցի ուսուցչութիւնը և այլն և այլն։

Թիֆլիսում գոյութիւն ունի մի յանձնաժողով, որ ստանձնել է հայ տպագրութեան 400-ամեակի տօնակատարումը։ Միևնոյն ժամանակ կազմված է Էջմիածնում յանձնաժողով, և գրերի գիւտի և տպագրութեան յոբելեանը՝ կաթողիկոսի յատուկ կարգադրութեամբ՝ պէտք է տեղի ունենան հոկտեմբերի 13-ին։

Թիֆլիսի յանձնաժողովը որոշել է տօնել նոյեմբերի 26-ին։

Եւ ահա այդ յանձնաժողովը փրփրալից բողոքով գոչում է ի լուր ամենեցուն, թէ ինչծ. մի Կաթողիկոս... և այլն։ Քանի որ իրանք որոշել են տօնել նոյեմբերի 26 ին, բոլորը պէտք է իրանց լսեն և ոչ թէ համարձակվի մի որևէ մէկը, մինչև իսկ Վեհը իրանց դէմ գնալ։

Յանձնաժողովը մինչև իսկ իրան վիրաւորված է համարում և, ամեն պայմանից ու բանից բարձր հեղինակութիւն համարելով իրան, յայտարարում է, թէ այնուամենայնիւ ինքը տօնումը կատարելու է նոյեմբերի 26-ին և իր համար ոչ մի նշանակութիւն չունի Ամենայն Հայոց Կաթողիկոսի որոշումը։

Կաթողիկոսը պարտաւոր է մինչև իսկ բաւարարութիւն տալ վիրաւորված յանձնաժողովին, ինչպէս ակնարկվում է յանձնաժողովի յայտարարութեան մէջ։

Ահա ձեզ բուն հայ հոգուն պատկանող բնորոշ յատկութիւններից մէկը։

Արդեօք, ընթերցող, սա էլ մի նոր նմուշ չէ հերօստրատութեան։

Եթէ Յունաստանը մի հատ Հերօստրատ ունեց, որը իր անունը պատմութեան մէջ յաւերժացնելու համար հրդեհեց 365 թուին Եփեսում Դիանայի տաճարը, հայերս, ինչպէս երևում է, ընդունակ ենք Հերօստրատներ դիւժիններով տալու։ Կալխաս

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԵԱՆՔԻ ՑԱՒԵՐԻՑ

XIV

Գրական ֆոնդ

«Հաւը երազում կուտ է տեսնում», ասել է հայկական առածը։ Ու հետևելով հայ իրականութեան մէջ առաջացած վերջին խոշոր դէպքերին, հայ գրողների համար էլ կարելի է այս առածը ձևակերպել՝ «հայ գրողը երազում ֆոնդ է տեսնում»։

Այո, նա իր կոպիտ փալասների մէջ պառկած, խարխուլ, քարու-քանդ՝ անունով միայն սենեակ, այլ աւելի շուտ բնի մէջ՝ ժպիտը երեսին տեսնում է, որ արդէն անցել են նեղութեան, չարքաշ ստորութեան անապահով օրերը, երբ նա ահը սրտին սպասում է ամեն րօպէ, որ քաղցը, ցուրտը, հիւանդութիւնը ու թշուառութեան միւս բոլոր հարազատ զաւակները դէպի իրան են պարզելու իրանց նետերը։ Այո, անցել է այդ ժամանակը, այժմ լեռան ետևից դուրս է եկել քնքոյշ տաք արևն ու աւետում է թմրած երկրին, մերկացած ծառերին ու դաշտերին, որ էլ չը կայ ձմեռ, մանուկ գարունն է արդէն եկել։

Այո, մանուկ գարունն է եկել, ու այնպէս քաղցր ժպտում է...

Գրողը երազում ծիծաղում է, ուրախ է հնչում այդ ծիծաղը, որովհետև էլ չը կայ վիշտ, նեղութիւն, չարքաշութիւն. այժմ նա ապահով է, նա էլ չէ վախենում դաժան քաղցից ու ցրտից...

«Հաւը երազում կուտ է տեսնում», «հայ գրողը՝ ֆոնդ»...

Բայց ինչ. մի՞թէ հէնց պէտք է այդպէս էլ մնայ երազը երազ, երբէք, երբէք իրականանալու չէ։

Չէ, այս տարին արդէն եկել է այդ երազի վերջակէտը դնելու, որ էլ չը շարունակվի, որ արդէն երազը կատարվել է, որ արդէն լրացել է կախարդի նշանակած ժամանակը և եկել է երազի իրականանալու օրը։

Անխիղճ էր կախարդը. նա երկար, շատ երկար ժամանակ էր նշանակել, բայց էլի հայ գրողը սպասեց, համբերեց ու հասաւ այդ երջանիկ օրվան։

400 տարի, է, քիչ չէ. ու հայ գրողը խեղճ, չարքաշ, հազիւ-հազ շնչելով հասել է իր փայփայած, խնամած քաղցրիկ երազի իրականացման ժամին։

Եկել է ժամը, երբ արդէն հայը վերջապէս կարող է պարզ ճակատով, ազատ-համարձակ կանգնել ու լիաբերան ասել՝ «Մենք կուլտուրական ենք»։

Մի ազգ այն ժամանակ միայն կարող է կուլտուրական կոչվել, երբ նրա մտաւոր շուկան հարուստ է, երբ մտաւորականութիւնն է, որ բնորոշում է նրա արժանապատուութիւնը, նրա առաջադիմութեան սահմանները։ Եւ այն ժամանակ է այդպէս լինում, այն ժամանակ է գալիս ինքնուրոյն արժանապատուութեան օրը, երբ այդ ազգը ապահովելով իր մտաւոր մշակներին՝ նրանց թևեր է տալիս իրանց թռիչքները գործելու։

Այդպէս է ամբողջ Եւրոպան, այդպէս են բոլոր ազգերը կուլտուրական անունը վաստակել։

«Մշակն արժան է վարձոյ իւրոյ». ահա թէ ի՛նչը հասկանալով բոլոր այդ ներկայումս լուսաւոր կոչվող ազգերը բառացի կատարումն են տուել։

Ու ահա եկել է այն օրը, երբ հայը իր 400-ամեայ բաւական աչքի խփող գրականութեամբ, համարձակօրէն ծածանէ իր դրօշը, այսինքն կատարէ իր պարտքը, մշակին իր վարձը տայ։

Հասել է ժամը, երբ գրողը իրան պէտք է բոլորովին ազատ համարէ կեանքի կենսական պահանջների կատարման համար ժամանակ մեռցնելուց, երբ նա այլևս ոչընչով չը պէտք է կապվի առօրեայ մանրիկ հոգսերի հետ, այլ բոլորովին ազատ՝ ուղղէ իր թռիչքը դէպի հեռուները, դուրս կորզելով գրական եթէ ոչ գոհարներ, գոնէ պատուարժան երկեր, հայ մտաւոր սեղանի վրա դնելու։

Կասեն, թէ այժմ էլ այդ նոյնը կարող է անել հայ գրողը... բայց բազմիցս անգամ կրկնվածները թւել, թէ ինչո՛ւ չ՛ կարող։ Կարծում եմ, այդ ամենին պարզ, հասկանալի իրողութիւնը մեր արժանապատուութիւնը չը պէտք է թոյլ տայ, որովհետև իւրաքանչիւր անգամ լսելով այդ իրողութիւնը, մենք պէտք է կարմրենք՝ այնքան չենք կատարել մեր պարտքը ու այնքան ստութիւն, կեղծիք, անխղճութիւններ են թաքնված դրանց տակ։

Արժանապատուութեան մասին խօսել կարող են միմիայն այն ազգերը, որոնք կատարում են իրանց պարտքը։

Եկել է ժամը, որ մենք էլ մեր պարտքը կատարելով՝ իրաւունք ունենանք մեր արժանապատուութեան մասին ձայն բարձրացնելու։

Տպագրութեան 400-ամեակը իւրաքանչիւր հայ մարդու տօնն է, իւրաքանչիւրն իր պարտքն ունի կատարելու։

Ու ահա հէնց այդ մտաւորական տօնն է, որ պէտք է գայ լուծելու «մշակն արժան է վարձոյ իւրոյ»-ն, որ պէտք է վարձատրվի մտաւորականի սպասաւորը, անդուլ մշակը։ Նա պէտք է վերջապէս այդ օրը ստանայ իր արնագինը, որովհետև իր արիւնով է ոռոգել մեր մտաւոր անդաստանը։

Անտարակոյս ենք, որ «գրական ֆոնդի» գոյութիւնը ապահովված է։

Տպագրութեան ֆօնդը, ասացինք, իւրաքանչիւր հայ մարդու տօնն է. այդ արդէն զերծ է առարկութիւններից. և որովհետև այդպէս է, ուստի պէտք է տօնի կատարումն էլ դնել այնպիսի լայն հիմունքների վրա ու այնպէս ծրագիր մշակել, որ տօնը համազգային լինի ու իրաւունք ունենանք ասելու, որ այդ տօնը իւրաքանչիւր հայի է պատկանում և ոչ մի քանի ընտրեալների կամ մի որևէ վայրի։

Հայ գրականագէտը ժպտում է, որովհետև երազի իրականացման համար կախարդի նշանակած, ժամանակաշրջանը լրացել է։

Եկել է ժամը, որ մենք մինչև այժմ մեզ կուլտուրական անուանելու գրաւականը տանք։ Արշալոյս Տէր-Յովհաննեան

Հանդամէջ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԻՒՂԵՐՈՒՄ

—

Ժողովրդի լուսաւորութեան գլխաւոր ֆակտորներից մէկը ժողովրդական ընթերցանութիւնն է։ Մեր բուն ժողովուրդը՝ մասսան դեռ ևս խաւար է. նա չէ սիրում գիրք, լրագիր կարդալ. դեռ ևս գիրքը, լրագիրն այնպիսի պահանջ չէ մասսայի համար, ինչպէս հացն և ջուրը։

Փոքրերի համար անթիւ դպրոցներ, մեծերի համար ժողովրդական ընթերցանութիւններ, թատրօն, դասախօսութիւններ, գրադարան-ընթերցաններ,—ահա անշեղ ուղղութիւնը, որին պէտք է հետևենք մենք՝ լուսաւորութեան ջահը առաջ տանելով։

Փորձերը ցոյց են տալիս, որ մեր ժողովուրդը, թէև դանդաղ, ընտելանում է կեանքի նոր և նոր երևոյթներին։ Պէտք է կազմակերպել գիւղերում կանօնաւոր ժողովրդական ընթերցանութիւններ, որոնք թէև սկզբում արգելքների կը հանդիպեն, սակայն ժամանակի ընթացքում կը զարգանան և բեղմնաւոր պտուղ կը տան։

1893 թ. ես ուսուցիչ էի Լօռու վիճակի Հայ-Գեառգեառ գիւղում։ Կիրակի օրերը ես հաւաքում էի գիւղացիներին դպրոցում և կարդում էի ժողովրդական մատչելի գրքոյկներ կարևոր բացատրութիւններով։ Գիւղի գզիրը կիրակի առաւօտները ման էր գալիս փողոցներով և բարձրաձայն կանչում. «Ա՛յ ժողովուրդ, թոփ ըլէք (հաւաքվեցէք) շկօլում, վարժապետը գիրք է կարդալու»։

Ընթերցանութիւններին ներկայ էին լինում 60—70 գիւղացիներ, որոնք ուշադրութեամբ լսում էին և համակրական կամ հակակրական բացականչութիւններ էին անում, ի նկատի ունենալով գրքի հերոսների կատարած լաւ կամ վատ գործը։ Յիշում եմ, մեծ տպաւորութիւն թողեց գիւղացիների վրա Զելինսկիի «Զրոյցներ հողի մասին»